Պարույր Սևակ

Մի խորունկ գաղտնիք

Շա՜տ խարազան է շաչել իմ գլխին,
Շա՜տ մտրակ՝ մեջքիս հասցեագրրվել,
Եվ հարվածների, զարկերի թիվը
Համրելու համար ինձ պետք է հիմա
Մի պատկառելի հաշվապահություն:
Բայց...
Այսօր բացեմ գաղտնիք մի խորունկ
Որ անշուշտ պիտի խիստ ցավ պատճառի
Ինձ ցավ պատճառել ցանկացող մարդկանց:
Նրանք զարկե՜լ են, հարվածե՜լ, ծեծե՜լ,
Բայց ինձ ո՛չ մի զարկ չի հասել բնավ,
Ինձ ո՜չ մի հարված չի դիպել երբեք,
Ու ես ո՛չ մի ծեծ չեմ կերել կյանքում:
Նրանք զարկե՛լ են, հարվածե՛լ, ծեծե՛լ
Ո՛չ թե ինձ,
Այլ լոկ այն տեղը, ուր ես
Կանգնած եմ եղել մի վայրկյան առաջ,
Մի վայրկյան առաջ... առաջ եմ անցել:
Եվ, այնուհանդերձ, եթե ինձ նրանք
Ցավ են պատճառել,
Ապա ա՛յն փոշով,

Որ բարձրացել է նրանց հարվածից
Եվ ինձ հասնելով լոկ հեռվից հեռու՝
Լցվել է իրե՛նց, իրե՛նց աչքերը...